« ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ » ՍՊԸ

Ք.երևան Ռիգայի 126/4 բն 49
էլ. փոստ a.syun@yandex.ru
հեռ. բջջ +374 94 400 140

«20» փետրվար 2023թ.
Ել. 20-2/2023

ՀՀ Շրջակա միջավայրի

նախարար Հակոբ Սիմիդյանին

Հարգելի պարոն Սիմիդյան,

Ի պատասխան Ձեր 2023 թվականի հունվարի 26-ի թիվ 3/02.5/798 գրության տեղեկացնում եմ, որ «Արծաթե Սյուն» ՍՊ Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) մասնագետների կողմից ուսումնասիրվել է Ձեր կողմից տրամադրված https;//www.armnab.am/LaboratoryListN էլեկտրոնային կայքը (այսուհետ՝ կայք):

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ կայքում ընդգրկված՝ հավատարմագրված ընկերություններից, «ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների, կաթ, կաթնամթերքի, հայկական կոնյակի, ավազ շինարարական աշխատանքների, դռներ և դրանց բաղկացուցիչ մասեր, միս մսամթերքի, սոխուկներ և պալարների և այլն» միայան «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ, «Չաարատ Կապան» ՓԲ և «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերություններն են ինչոր կերպ առընչություն ունեն ընդերքօգտագործման հետ:

Նշված երեքից «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ և «Չաարատ Կապան» ՓԲ Ընկերությունները ըստ կայքի զբաղվում եմ հանքաքարում և խտանյութում ոսկու և պղնձի պարունակության որոշմամբ և ծառայություն չեն մատուցում, իսկ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ Ընկերությունը ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված չափանիշներին չի համապատասխանում: «ՀՄԿ» ՊՈԱԿ լաբորատորիան չկար տրամադրված հավատարմագրված լաբորատորիանորի ցանկում:

Ընկերությունը 2023 թվականի հունվարի 16-ի թիվ Ել. 16-1/2023 գրության (այսուհետ՝ թիվ Ել. 16-1/2023 գրություն) վերջին պարբերությամբ խնդրել էր հստակեցնել՝ մեջբերում եմ *«Միևնույն ժամանակն Ընկերությանը տրամադրել Որոշմամբ պահանջվող համապատասխան լաբորատորիաները ինչ հավաստագրեր պետք է ունենան, և որ մարմինն է իրավասու դրանք տրամադրելը՝ տալ դրանց անվանացանկը:»*, սակայն նման տեղեկատվություն պատասխան գրությունում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ հնարավորության դեպքում տրամադրել անվանացանկը՝ Որոշմամբ պահանջվող համապատասխան լաբորատորիաները ինչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No 0-3868
«20» 02 2023թ.

հավաստագրեր պետք է ունենան, և որ մարմինն է իրավասու դրանք տրամադրելը, հնարավորություն ընձեռնելով Ընկերությանը որոնումներ իրականացնելու նպատակով:

Միևնույն ժամանակ Ընկերությունը թիվ Ել. 16-1/2023 գրությամբ հայտնել էր իր պարտավորությունների և համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաների չլինեու մասով՝ չնայած այդ ամենի Ընկերությունը Ձեզ ներկայացնում իր էլեկտրոնային հասեում https://www.basalte.am/hy/documentation տեղադրված մշտադիտարկումների արդյունքները:

Հարգանքով՝

Տնօրեն Գ. Մխիթարյան